Պարոնը վեր առեց կէսը-այրուած գիրքը, թերթեց եւ, դառնալով ծառային, ասաց.

— Այո՛, շատ բանի պէտք կը գար, եթէ կրակը մեծ մասը ոչնչացրած չլինէր:

Դա հայոց եկեղեցական պատմութիւնն էր, որ վաղուց դիտաւորութիւն ունէր գրելու հանգուցեալը:

Պարոնը գրասեղանի վրայ մնացած թղթերն եւս հաւաքեց դրեց արկղի մէջ, կողպեց: Իսկ հանգուցեալի թաշկինակը արեան վերջին բծով՝ թաքցրեց իր ծոցում...

Յետոյ դարձաւ նա դէպի ծառան:

— Դու, բարի Ռաշիդ, քո հաւատարմութեան համար չվարձատրոեցար քո պարոնից, բայց կը վարձատրոես ինձանի: Դու պահպանեցիր մի գանձ, որ մեր ազգի համար շատ թանկագին պէտք է լինի: Այդ գանձը այդ արկղի մէջն է ամփոփած: Վեր առ այդ արկղը, գնանք ինձ հետ:

Յետոյ դարձաւ դէպի վանքի աբեղան:

— Շատ շնորհակալ եմ ձեզանից, հայր սուրբ, որ դուք այնքան բարի էք եղել, որ թոյլ էք տոել ձեր վանքում այդ իրեղէնները պահպանոին: Որպէս տեսաք, ես վեր առի հանգուցեալի թղթերը միայն, իսկ նրա մնացեալ կայքը թողնում եմ ձեր վանքին:

Հայր սուրբի դէմքը փայլեց ուրախութիւնից:

Պարոնը մեկնեց նրան մի ծրար, ասելով.

— Խնդրեմ, ընդունէք այդ ծրարը. դրա մի մասը կը պահէք ձեզ համար, իսկ մնացածից, որքան կը ծախսոի, մի տապանաքար շինել տոեցէք եւ դրեցէք հանգուցեալի գերեզմանի վրայ:

Աբեղան շնորհակալութեամբ ընդունեց ոսկիները, հարցնելով.

— Ի՞նչ գրել տանք տապանաքարի վրայ, հանգուցեալը այնքան տարիներ մնաց վանքում, մենք նրա անունը չիմացանք:

— Ոչինչ գիր հարկաւոր չէ, — պատասխանեց պարոնը, — միայն մի խաչ փորել տոէք:

— Աստուած հոգին լուսաւորեսցէ՛, — օրհնեց աբեղան:

Ռաշիդը վեր առեց արկղը: Արտասուքը հեղեղի նման թափւում էր խեղճ երիտասարդի աչքերից, երբ նա պէտք է թողնէր այդ մռայլ խուցը, ուր բնակոել էր նրա տէրը, ուր ամէն մի առարկայ յիշեցնում էր նրան այն մարդուն, որին նա այնքան սիրում էր, որին նա պաշտում էր: Երբ վանքի դռնից